«5% հետվճար՝ Visa թվային քարտով գնումներ կատարելու դեպքում»

«5% հետվճար՝ Visa թվային քարտով գնումներ կատարելու դեպքում» ակցիայի կանոններ

1. Ներածություն

1.1. «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) կազմակերպում է «5% հետվճար՝ Visa թվային քարտով գնումներ կատարելու դեպքում» ակցիա, որի նպատակն է նպաստել Visa թվային քարտի նոր քարտապանների ներգրավմանը:

1.2. Ակցիայի կանոններ սահմանող սույն փաստաթուղթը (այսուհետ՝ Կանոններ) հանդիսանում է հրապարակային առաջարկ (օֆերտա)՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 451-րդ հոդվածի և 453-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությամբ:

Հիմնական հասկացություններ.

1.3. **Կազմակերպիչ՝** Սույն կանոններով սահմանված Ակցիայի կազմակերպիչն է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն:

1.4. **Մասնակից՝** Բոլոր նրանք, ովքեր 2026թ.-ի հունվարի 1-ից «Telcell Wallet» բջջային հավելվածի (այսուհետ՝ Բջջային հավելված) միջոցով առաջին անգամ բացել են Visa թվային քարտ տեսակի դրամային քարտ և սույն թվականի փետրվարի 10-ից մինչև ապրիլի 10-ը տվյալ քարտով կատարել են գործարքներ:

1.5. **Հետվճարը կտրամադրվի՝** ակցիայի վերջնաժամկետից 15 օր անց:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Ակցիայի վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը տրամադրվում է https://telcell.am/ կայքում:

2.2. Մասնակցելով Ակցիային մասնակիցն անվերապահորեն ընդունում է Կանոններով սահմանված պայմանները և դրույթները:

2.3. Կանոններին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

2.4. Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել Կանոններում, որոնց վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Ակցիայի 2.1 կետում նշված հարթակում:

2.5. Ակցիայի շրջանակում հետվճարը տրամադրվում է առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է «ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն:

3. «5% հետվճար Visa թվային քարտով գնումներ կատարելու դեպքում» ակցիայի անցկացման կարգը

3.1. Սույն ակցիայից օգտվելու հնարավորություն են ստանում Բջջային հավելվածի այն օգտատերերը, ովքեր 2026թ.-ի հունվարի 1-ից Բջջային հավելվածի միջոցով բացել են Visa թվային քարտ և սույն թվականի փետրվարի 10-ից մինչև ապրիլի 10-ը ներառյալ ժամանակահատվածում տվյալ քարտով կատարել են գնումներ: Ակցիայի շրջանակներում կիրականացվեն Կանոնների 3.1.1 կետում սահմանված գործողությունները՝

3.1.1. Ակցիայի հնարավորություններն ու մասնակցության պայմանները.

- Հետվճարը կիրառելի է այն օգտատերերի համար, որոնք առաջին անգամ բացել են Visa թվային քարտ 2026թ.-ի հունվարի 1-ից:
- Հետվճարը տրամադրվելու է միայն այն վճարումների դիմաց, որոնք կատարվել են Visa թվային քարտով:
- Հետվճար չի տրամադրվելու կոմունալ վճարումների, քարտից քարտ և հաշիվների միջև փոխանցումների, էլեկտրոնային դրամապանակների լիցքավորումների և դրանցով կատարված գործարքների՝ այդ թվում QR վճարումների (<u>բացառությամբ Apple Pay և Google Pay համակարգերին կցված Visa թվային քարտով կատարված գործարքների</u>), Telcell Wallet վճարումների և բուքմեյքերական ընկերությունների հաշիվների լիցքավորումների համար:
- Հետվճարը տրամադրվում է բացված Visa թվային քարտի ներքո գործող քարտային հաշվին, որով կատարվել է վճարումը:
- Յուրաքանչյուր իրականացված մեկ գործարքի արդյունքում հաճախորդին տրամադրվելու է 5% հետվճար:
- Յուրաքանչյուր օգտատիրոջ համար առավելագույն հետվճարի սահմանաչափը կազմում է 5,000 ՀՀ դրամ:
- Հետվճարը տրամադրվելու է 20,000 ՀՀ դրամ և ավելի գործարքների դեպքում՝ ակցիայի վերջնաժամկետից 15 օր անց:

- Գործող Visa թվային քարտի բոլոր քարտապանների համար, անկախ քարտի բացման օրվանից, գործելու է 5% լրացուցիչ զեղչ՝ **Gant, Converse, Ramsey** և **Colin's** խանութ-ցանցերի ամբողջ տեսականու համար, ինչպես նաև լրացուցիչ 5% զեղչ՝ արդեն իսկ զեղչված տեսականու համար:

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել https://telcell.am/ կայք կամ զանգահարել +374 60 272222, +374 60 272223 հեռախոսահամարներով:
«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: